

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ԱՄԵՐԻԿԱ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱՋԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

*Rédaction du journal*

„Iravounk“

## VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

# ВАРНА (България)

Գրութիւնք եւ  
չեն տրուիր

«Իրաւունք»-ի ընկերացողները տեկնոտ հետաքրքրութեան մէջ պահող մեր այս քերթօնը քեռ գրքի վերածնունդն նպատակ չունէինք, բայց ամէն կողմէ մեզ ուղղուած խնդրանքներէն ստիպեալ, սկսած ենք զանի իբրեւ գիրք տպագրել, նկատելով թէ աստով մեր ազգային յեղափոխական կեանքին մէջ յաճախող դէպքերու շահեկան ոչ խիստ հետաքրքրաշարժ հաշաքածոյ մը ընծայած կրչանք ընթերցատէրներու, որոնց մեծագոյն մասին առիթ եւ դիւրութիւն պակասէ «Իրաւունք»-ի ներկայ տարւոյ թիւերը ամբողջովին հաշաքելու :

Գիրքը երկու հատորներէ կը բաղկանայ եւ արդէն կէսը տպագրուած ըլլալով, միշտ կենին առ տպագրութիւնը փոշրով տաւալ կը տաւորուի. աշխեքն երկու հատորները քանի մը շաբաթ յետոյ արդէն հրապարակ երա՛հ պիտի ըլլան :

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐԻՆ ԳԻՆԸ Չ ՅՐԱՆՔ Է

Ստանալ փախաբողները այդ 2 ֆրանքը աշխմեն խմբագրութեան դրկելով կրեան վատան ըլլալ թէ ԹԻԱՊԱՐՏԸԻ կազմուած երկու հատորները քիչ աւելեւէ կտտանան : Այս պզտիկ գումարը մեզ հասցենելու դիշուքեան համար կը յայտարարենք թէ փոխարենը աւելն երկրի նամակադրոյն կընդունինք 10 0/0 գեղջով :

ጣፔሪያን

ՀԱՆԴԵՊ ԺՆՇԵԱԼՆԵՐՈՒ

Ռուսո-թուրք սահմանագլխին  
 լուս, ռուսական հողին վրայ հա-  
 լաքուած հայ զաղթականներու  
 փրանսական կառավարութեան ուղ-  
 ղած աղերսագիրը՝ զոր մեր նա-  
 խորդ թուով հրատարակեցին,  
 հիւ բայց մարտիրոսացած ժողո-  
 վուրդի մը առաւել քան երբեք  
 անտանելի վիճակին պատկերա-  
 ցումն էր, որուն նմանը կարծեմ  
 պատմութիւնը բնաւ չէ արձա-  
 նագրած։ Տասնեակ հազարաւոր  
 խեղճեր տարւոյն այս ձմեռնա-  
 մուտի օրերուն լեռներու ու դաշ-  
 տերու վրայ հալաքուած ազատ չէն  
 ոչ առաջ և ոչ ալ ետ երթալու։  
 Ինչդեռ Հայաստանի այդ լեռնե-  
 րուն յատուկ սառնաշունչ ձմեռը  
 ահա վրայ կը հասնի զանոնք տեղն  
 ի տեղն սառեցնելու, դիակացնելու  
 սպառնալիքով ի. իբրեւ թէ քիչ  
 եղած ըլլար 300,000 շարդուողնե-  
 րու թիւը և այս մնացորդներն ան-  
 պատճառ շատապարտուած ըլլալին

տարբեր գէնքով մը կոտորուելու :

Ահա ճիշդ ամիս մըն է որ այդ աղերսագիրը ֆրանսական կառաւարկութեան յատուցուած է, անոր միջամտութիւնը խնդրելով. եօթը տարուան տառապանքէ վերջ մահուան դուռը հասած այդ հազարաւոր անմեղներու հոգեվարքի այս աղաղակն ալ ցարգ պետութեանց կարեկցութեան չարժանացաւ, ոչ մէկ պաշտօնական ձեռնարկ դեռ չստեցաւ. ձիւները տակաւ կը սկսին տեղալ այդ տարագիրներու կիսամարկ մարմնոյն վրայ, բայց դեռ Տէլգասէն չարժիր, մինչդեռ փութկոտ գործունէութիւն մը ցոյց կուտան թուրեւրպական մեծ դահլիճները Համիտը քաջաբերելու, որ խիստ միջոցներ ձեռք առնէ Մակեդոնացի յեղափոխականները ջախջախելու, ապահովելով թէ պետութիւնք չը պատի միջամտեն. ասոնք ամէն ճշում կը բանեցնեն պուլկար կառավարութեան ալ վրայ, ոչպէս զի սա իր զոհները գոցէ թուրք զինուորի հարուածէն փախչող Մակեդոնացի զիւղացիներուն առջեւ:

Հանդէպ Մ․ Կ․ Դ․ նացւոց պետութեանց բռնած այս դատապարտելի ընթացքին եթէ մեղմագցուցիչ հանգամանք մը կը տրուէ սա նկատուումով թէ ասոնք նախապատմութիւնը զսպել կուզեն որպէս զի հանդարտութեան մէջ պէտք եղածը իրենք կրնան որոշել, սակայն ինչ մեղմացոյցի պարագայ կարելի է փնտռել ու գտնել ռուսութեւրք սահմանազրկ խնայաքուստ հանդարտ ու հոռի հոգալովակներու թախանձաքին հանդէպ իրենց անտարբերութեանը մասին . եթէ Մակեդոնիոյ մէջ պոլկար ապստամբներուն քանի մը թուրք ջարդելու հաւանականութիւնը պետութեանց խղահարութիւն կը պատճառէ, ինչպէս ասոնց խիզը հանդարտ կըլլայ ձմեռուան բռնքին տասնհակ հազարաւոր անմեղ Հայեր ենթարկելու որ ասոնք ձիւնով պատանգուին :

Արդեօք բողեներ պիտի ըլլա՞ն թէ արտասահմանի հայ գործիչներու շարժումները կասկածելի կը դարձնեն սահմանագլուխը հաւաքուած հայ գաղթականներն ալ։ Այս յիմար պատճառաբանութիւն մըն է. մանաւանդ թէ արտասահմանի մեր գործիչները տարիներէ ի վեր բնաւ պատճառ չեն տուած խուրքիոյ ո՛ր եւ է կէտին վրայ չլիթութիւն մը յարուցանելու. աւելոնց արտասահմանի մէջ գործուէնէութիւնը սահմանափակուած է միայն ու միայն դաշնագիրներու որոշուած և պետութիւններէ գծուած 1895ի բարեկորգմանց ծրագրին գործադրութիւնը պահանջելու մէջ։ Իսկ մասնաւորներու ինքնապաշտպանութեան համար հաւաքած դրամները, եթէ տեղը հասնին, «ինքնապաշտպանութենէ» ա՛յդէն ոչ մէկ նպատակի ծառայելու սահմանուած չեն։

300 000 ջարդուամենքու ար-  
դար վրէժխնդրութեամբ ամէն  
ծայրայեղութեանց դիմելու իրա-  
ւունք ունեցող հայ ժողովուրդը  
իր այսպէս հանդարտութեամբ ու  
խաղաղագիրութեամբ կապրի տա-  
րիներէ ի վեր, ու ինչ քսելու է  
զանի անխղճօրէն իր դահիճի ճի-  
րաններուն տակ լքանող պաշտպան  
պետութիւններուն :

Լիբանանցիներու, Յոններու ապստոլ թեան ախոյեանը հանգիսացող Յրանսայի արդի նախարարը Լիոննտոյի և Թիւպինիի կասկածելի պահանջը գանձելու համար անցեալ տարի Միջերկրականի նաւատորմիչը Միտլլին գրաւելու զփոյց քայլ տար ի վեր հայ գաղթականներու ազերագիրը ստացած, գերազանցօրէն մարդասիրական պարտականութեան մը առջև անտարբեր կը նստի. իբրեւ թէ Հանրապետական Յրանսան Արեւելքի գործերուն զինքը միայն հարկահաւաք կ'որդած ըլլար:

Պետական անձնատրու թեանց՝  
հանգեալ ճշուած ու հարստահար-  
ուած ժողովուրդներու՝ ցոյց տուած  
այս մեղսակցական անտարբերու-  
թենէն շատեր սրամտած ու յու-  
սահիկ հաւանաբար օր մը մղուին  
անիշխանականի տարազն հագնե-  
լու, և այդ օրն ո՛ր շատ հեռու  
րլլալու չէ, յորում ամփոռականերու  
գազազները իրարու յափորգեն:

Եւ այն ատեն զարժանալ պէտք  
չէ թէ ի՞նչու կը գործուին այդ ո-  
ճիւրհերը :

Այդ «ինչու»ն պետական մար.  
գրիկ իրենց այսօրուան ընթացքին  
մէջ փնտռելու են :

ዓ በኩርጣድፅ

## ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԷՆ

УДЛУЖБЕНИ, 13 УКУПНО.

Յուսաւ, որ մի որ Սալմաստը կա-  
րող է լաքրուել զանազան ենթէշե-  
կան խմբերի ներկայութիւնից, այլ  
եւս անկարելի է թւում առայ-  
նորդի ձեռք առած եռանդուն միջոց-  
ներն սպարդիւն անցան եւ աւելի եւս  
կատաղեցրին ենթէշերներին՝ Վերջերս  
առաջնորդը Հաֆթման գիւղում գըռ-  
նուելով, ուղեցել էր իւր հետ թաւ-  
րիզից բերած միակ ուսուցչին այդ  
գիւղի դպրոցում պաշտօն տալ, բայց  
ենթէշեկան խումբն արգելում է եւ  
սպառնում առաջնորդին, որ եթէ նա  
յետ չկանգնի իւր գիտնալորութիւնից,  
որովհէն նա սպանել ուսուցչին։ Այդ  
սպառնալիքից կետոյ առաջնորդը պա-  
հանջում է սրկկայական այդ խմբից  
անմիջապէս թողնել գիւղը եւ հեռա-  
նալ Սալմաստից, սպառնալով հակա-

ուսկ զկարգում դիմել կառավարութեան  
աջակցութեանը եւ նրա միջոցով ար-  
տաքին տալ ինքնիշխանութիւնը (վանդի-  
նէր են) մերժում են հետաձգել եւ քա-  
ղաքական կերպով յայտնում, որ իրենք  
արհամարհում են անապահովութիւնը  
կարգադրութեանը եւ սպառնալիք-  
ները: Առ այժմ գործը փոխադրւած  
ուսկանալիքների շրջանում է գտնու-  
մ, որ այժմ գործը փոխադրւած  
ուսկանալիքների շրջանում է գտնու-  
մ, որ այժմ գործը փոխադրւած

Մահալ գիւղի ենիշխանի խմբի  
սխառագործութիւնների, անապահով  
կարգի ցուցակից երեւում է, որ  
վերջին 3-4 տարուայ ընթացքում  
մարդու գնացող աղջիկների մեծամաս-  
նութեան կուսութիւնը նախօրոք  
խտրադասութեան է ենթարկւում եւ  
միջին ենիշխանների կողմից  
ուսկանալիքների մէջ չորս տար-  
ուայ ընթացքում կարողացել է բռնա-  
բարեւայ գիւղում 39 կին եւ աղջիկ:  
Այդ բոլորը ցոյց է տալիս, որ մեր  
ենիշխանները ոչնչով յետ չեն մնում  
ճանկաստանի համիդիէն քիւրտ աւա-  
զակներից, ինքեւս գերազանցում են  
նրանց իրենց սխառագործութիւնների  
մէջ:

— Վերջերս Սալմաստում մինչեւ  
այժմ չտեսնուած մի գէպը պատահեց:  
Ասորական խոսքով գիւղում վաղուց  
բ վեր վէճ կար այդ գիւղում հաստատ-  
ուած կաթնովի միսիւնարների եւ ա-  
սորի եպիսկոպոս Սալմաստի եւ  
նրա կուսակիցների մէջ: Միսիւնար-  
ները բողոքում են կառավարութեանը  
եւ վերջինս ուղղութիւն պատժել խոսք-  
աղանդներին, գիւղն է լցնում 60ի չափ  
Ղարաղաղի ձիւնորներ, որոնք յայտնի  
են իրենց բարբարոսութեամբ, եւ  
հրամայում տակն ու վրայ անել գիւղը:  
Գիւղացիների մեծամասնութիւնը  
փախչում է, իսկ ձիւնորները 15 օր  
մնալով գիւղում թաղանթում են բոլոր  
տները եւ բռնաբարում 70 կին, ու-  
րոնցից 12 կոյս աղջիկներ են: Կա-  
տարուած այդ վայրենութեան գէժ  
արդէն բաւական բողոքներ են ուղար-  
կուած Թաւրիզ: Բայց մինչեւ այժմ  
մի որդեկ կարգադրութիւն չէ եղել:

— Սահմանադրութեան քաղաքացիական  
հանգիստ չեն: Մօտ օրերս արեւմտահայ  
ընդհանուր տեղի ունեցած ճարայում

Մարդկային եւ Շիկակ ցեղերի մէջ:  
Մարդկայինները մեծ թուով անցնում  
են սահմանը եւ յարձակւում ճարայի  
վրայ: Սակայն չիկակների ցեղապետ  
Ջահար աղային, որը մի քանի քան  
տանաք է, յաջողութեամբ է յետ մղել  
մարդկայիններին եւ նրանցից մի քա-  
նիսին սպանել: Ջահար աղան իւր  
այդ քաջագործութեան համար կառա-  
վարութեան կողմից «խալաթ»ով վար-  
ձատրուեց:

Քրդական արշաւանքի սարսափը տե-  
րեւ է նոյնպէս Սալմաստի բնակչու-  
թեանը: Շատերը կարծում են, որ  
բռնակի աշխարհից հետաձգուող յի-  
տոյ, քրդերն անպատճառ կարշաւեն  
Սալմաստի վրայ, եւ դա շատ հաւա-  
նական է, որովհետեւ քիւրդերը մի-  
ջանի տարի է արդէն, որ սպառնում  
են Սալմաստի բնակչութեանը:

ՀՐԱՅՐ

Նոր-Դար

### ԿՐԿԻՆ ԱՆԿՈՒՄ

ՇՈՒՄԼԱ, 7 Հոկտ. 1902

Երէկ (կիրակի) 6 Հոկտեմբեր, երկ-  
րորդ անգամ ընդհատ, կատարուե-  
ցաւ Շումլայի ազգային վարժարան-  
ներու հոգաբարձուական ընտրութիւն-  
ները:

Ոչ չափազանցած եւ ոչ ալ սխալած  
պիտի ըլլանք, եթէ ըսենք թէ՛ ոչ մի  
ընտրութեան եւ ազգային գործի առ-  
թիւ այսքան տեղացի հայեր համա-  
խըմբուած էին:

Շումլայի վարժարաններու մէջ մատ-  
նիչ եւ խաչազող վարժապետներ հիւ-  
րընկալող ազգաշինար ցեղերու գործած  
տեղի արարքներու արձագանքը, մին-  
չեւ Տէլի-Օրմանի խորհրդ հասած էր,  
այնպէս որ Շումլայի միջնակարգ հե-  
ռու գտնուող ազգայիններ, հայ ման-  
կուոյն շահերու հանդէպ, պահ մը  
մոռնալով իրենց անձնական-տնտեսա-  
կան շահերը եւ փակելով իրենց կըր-  
պակները, կիրակի առաւօտ շարն ի շար  
եկած համախմբուած էին ազգային  
ընթերցարանի մէջ եւ արական վար-

ժարանի շուրջը, ուր կատարուեցան  
քուէարկութիւնները:

Ճիշդն ըսելով, օրինակելի եւ գնա-  
հատութեամբ արժանի բան մըն է Շում-  
լացիներու սկսած 80 տարեկան ծե-  
րունիներէն մինչեւ 10 տարեկան մա-  
նուկները—ցոյց տուած հոգատարու-  
թիւնն ու համակրանքը՝ զէպի իրենց  
վարժարանները:

Այսօր խօսելով միայն կիրակի օր-  
ուան քուէարկութիւններու մասին,  
ինչպէս Խրաւունք գիւղական էր, Շում-  
լացիք ընտրեցին այնպիսի հոգաբար-  
ձուներ, որոնք կը յուսանք թէ՛ պիտի  
գիտնան ճանաչել կրթական գործի  
նուիրակութիւնները, եւ ձեռք ձեռքի  
տալով Պատ. Թաղականութեան, Խնա-  
մակալութեան եւ ուսուցչական խմբի  
հետ, նոր զարդ մը, զօրաւոր մղում  
մը պիտի ստան Շումլայի կրթական  
եւ ազգային գործերուն: Որովհետեւ  
չը կան այլեւս հոգաբարձութեան մէջ  
խնամակալն յարաբերութիւններով  
եւ կուսակցական նկատմամբ ա-  
ռաջնորդող անուանական էֆէնտի-  
ներ: Ժողովուրդը կրկնակի քուէար-  
կութիւններով՝ իր վստահութիւնը  
չարաձգար գործածող այդ անընդունակ  
պաշտօնեաները ձգեց իրենց պաշտո-  
նէն, եւ անոնց տեղ ընտրեց այն-  
պիսի անձինք, որոնց համար առայ-  
ժմ, նախքան գործի ձեռնարկելին  
գտնէ կրնանք ըսել որ, ոչ խնամա-  
կան յարաբերութիւններով կապուած  
են եւ ոչ ալ կուսակցական միջոցներ-  
ներով սնուած են: Բնա՛ այդ ազգա-  
յիններու անունները:

- Տիար Ալիքան Մանուկեան
- » Թորոս Հճ. Ստեփանեան
- » Յովակիմ Թորոսեան
- » Յովհաննէս Տ. Արիտաքեան
- » Վաստիպուհ Մարգարեան

Նախկին քուէարկութիւնները քե-  
կանոյ խոռոչակիները, թերեւս պահ  
մը կարծեցին որ կաշառքով կամ  
սպառնալիքներով այս անգամ կը յա-  
ջողին գտնէ ձայներու քիչ առաւելու-  
թեամբ կորսնցնել, եւ ասոր համար  
ամեն միջոց ձեռք առին, ուղեցին  
չարաթ երեկոյ աղմուկ բարձրացնել  
ազգային ընթերցարանի մէջ, որպէս  
զի մեծամասնութեան կողմէն որ եւ է

անխոհեմութիւն գործելով քուէար-  
կութիւնը յետաձգելի, բայց չը յաջո-  
ղեցան, եւ Շումլայի խոռոչակիներ-  
ներու երեք նախամարտիկ հսկաները  
թշուարներու նման դուրս նետուեցան  
ազգային ընթերցարանէն, որով թէ  
խոռոչակեանց առաջին անունեցու-  
եւ թէ ապացուցուեցաւ ու նուիրա-  
գործուեցաւ որ Պետո-Պուլկարացիին  
հիմնող խոռոչակիները գործ յունին  
Ազգային Ընթերցարանի մէջ, եւ ա-  
նաք արտաքուստներ կը համարուին  
«Շումլայի Ազգային Ընթերցարանի  
Ընկերութեան» համար:

Կիրակի ցերեկն անցաւ խաղաղ եւ  
անգործ, քուէարկութիւններու ժա-  
մանակ ամէն զգուշութիւն ձեռք առ-  
նուեցան, որպէս զի խոռոչակիները  
որ եւ է աղմուկ բարձրացնելով գոր-  
ծին չը վնասեն: Ժամը հօթը հազիւ  
քառօրէ քիչ անցած, ուսանողներ,  
կեցցէներու ուսուցում մըն է սկսաւ,  
հարկաւոր որ մարդիկ միաբերան կը  
պատային, կը գոչէին կրկին անկողն,  
կրկին ջախջախում, եւ այս անգամ  
50 ձայնի դէմ 88 ձայնով, Աստուած  
ողորմի ինկող քարթիին  
ու խաչազող պաշտպանող բարթիին:  
Գաղթական

Յ. Գ. — Եթէ քուէարկութիւնները  
կատարուեցան վերջացան, բայց դեռ  
երկու վարժարաններն ալ բաց են:  
Այսօր խօսք կար, որ նորընտիր Հո-  
գաբարձուները վաւերացուելէ առաջ,  
աշակերտները, որ մօտ 20-30 օրէ  
ի վեր եկեղեցւոյ շրջափակին մէջ գըտ-  
նուած հին վարժարանին մէջ կուսա-  
նէին, փոխադրուին միւս վարժա-  
րանը, բայց ինչպէս կերելի չը յա-  
ջողուեցաւ այդ բանն ընել, եւ մատ-  
նիչ վարժապետ ինկող հոգաբարձու-  
ներու 4-5 հատ ազգական դուստրե-  
րով մի քանի օր եւս քաշը պիտի գալ  
Շումլայի մէջ, մինչեւ որ վերջապէս  
ժողովուրդը քիթէն բռնած դուրս հանէ  
ազգային վարժարանէն ըսելով, «այս-  
տեղը մօտեցնելու ոչ օթեւան է եւ  
ոչ ալ կայան»:

Նոյն

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

(22)

## ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԱՐԻՒՆԱԼԻ ԹՈՒԱԿԱՆԸ...

Ու իր կապարագոյն ու հրատապ շրթունքներուն  
տանկելով այդ ժանգոտած դաշտը կը համբոյրեն եւ  
չէր կշտանար:

— Ենթադրելով եմ, Միւրո ախպար, մընջեց  
Ներսէս Արծրունին:

Պաշտ. կինը Լաւրաբարին հետ կը խօսէր այդ պա-  
հուն, հետեւաբար չը տեսաւ իր հայրենի տան այդ  
նուիրական յիշատակը:

— Հիմա կէս գիշերը չեղած եւ պիտի մեկնիմ,  
Միւրո ախպար, նկատել տուաւ Ներսէս Արծրունին:  
Կարելի է երկու օրէն կը վերադառնամ:

— Դէպի ո՞ւր, հարցուց Միւրո ախպար:

— Անգամ մը խումբին քովը կուգեմ երթալ: Յե-  
տոյ՝ Վեհափառ պիտի տեսնեմ անպատճառ:

— Դուք գիտէ՞ք... Աստուած ձեզի հետ, մընջեց  
Միւրո ախպար: Բայց եթէ Լուսիս ու Վանական  
գալու ըլլան, ի՞նչ ըսեմ:

— Անոնք իմացած են իմ երթալիդ տեղս: Կպիտի  
հարցունեն: Արդարեւ, կէս գիշերուան մօտ, Ներսէս Արծրու-  
նին մեկնեցաւ:

### ԲԱՆԴՈՒՄԸ ՏՈՒՆԸ

Արեւը նոր ծագած էր կապոյտ ու անամպ երկին-  
քին երես: Բնութեան ամենէն անուշ ու ամենէն  
յանկուցիչ պահն էր այդ: Ա. գիւղը գեղեցիկ այ-  
գիներու մէջէն կերեւար:

Մարդ մը՝ ամբողջ գիշեր մը քաշելով հասած էր  
գեղէն քառօրէ մը հեռու գտնուող մարգագետնի մը  
մէջ, ուր պաղ ու չընչուէն ջրով աղբիւր մը կար:

Հազած էր պատառաւուն զգուշ մը, քրտինքի  
աղբը կապած չափիկ մը, կարկուտած բռնկոյն մը,  
կարծ ու հասակեկ զազախիկ մը ու տեղական պղն-  
ճաւած տրեխ մը: Իսկ գլուխը դրած էր հինգած ու  
թիմարայ աղու որ աղջիկներու հիւսած սրտխփին:  
Մէկ ուսէն տպարակ մը կար, որուն մէջ չորացած  
հացի պատառներ լեցուած էին, իսկ միւս ուսէն  
կախուած էր կաւի մը մէջ փաթեթուած մանգաղ  
մը: Այնպէս որ զինքը տեսնող մը անպատճառ խոտ  
քաղելու եկող սարսիկներէն պիտի կարծէր:

Բայց ո՞չ. այդ գեղական տարազով ծածկուած  
մարդը, սարակ մը չէր, խոտ քաղելու եւ գրամ  
վաստիկու նպատակ մը չուէր: Պաղուկ աղբիւրին  
քովը՝ ձեռքը ծնօտին դրած պահ մը մտածող այդ  
անձը մեր ծանօթ վանականն էր, որուն զէմբը

հալիւ էր, աչքերը փոսքեր էին ու ճակտին խոր-  
շմինքը դուրս ցցուել էին՝ թշուառութեան մը ամ-  
բողջ պատկերացումը նկարելով իրենց գալարու մե-  
րու մէջ:

Ի՞նչ ժամ մը չափ հանգստանալէ ետքը՝ Վանա-  
կան ոտքի ելաւ եւ գէպի գիւղը յառաջացաւ:

Չորս տարուան մէջ անգին կերպարանափոխու-  
թիւններ եղած էին չորս կողմը: Նոր չէնքեր, նոր  
պարտէզներ ու մանաւանդ մաքուր փողոցներ կա-  
յին:

Վանական սիրտը մորմոքուած վիճակով մը ան-  
ցաւ փողոցներէն ու յանկարծ աւերակի մը առջին  
կանգ առաւ:

Այդ աւերակը քանդուած տուն մըն էր, որուն  
ճրագը դաւաճան Գիւր Ջաքօն մարած էր:

Մէկ խօսքով՝

Ռէս Մէլիքին տունն էր այդ, որ անգին ըն-  
դարձակութեան մը վրայ կը մնար՝ իր քանդուելու  
մօտ չորս պատերուն մէջ:

Տունին ետեւը պարտէզ մը կար: Ատիկա երեսի  
վրայ մնացած ըլլալով քանդ ու աւեր գարձած էր:  
Վանական նայուածք մը նիւտեց այդ աւերակնե-  
րու վրայ ու փողոց մը մտաւ ուր կը գտնուէր Տէր  
Օհանի տունը:

Տունին դուռը բաց էր: Վանական ճնշուած քայ-  
լերով սրահը գնաց եւ տեսաւ փոքրիկ մանուկ մը  
որ արօր շինելու զբաղած էր:

(Շարունակելի)

ԹԱՏԵՐԱԿԱՆ

Նախագահ (Յոյս) թատերախումբը, Պ. Պապանյանի տաղանդալից ղեկավարմամբ, Սանգրալի սրահին մէջ իր ներկայացմանը շարքը կը շարունակէ հետզհետէ Գերկայացուցչի շարքը գիշեր «Նրկոր» ետակ փոխարէր, կիրակի գիշեր Հիւկոյի «Ալէքսանդր Մակեդոն» ու հինգշաբթի գիշեր «Առաքելայի մը կեանքին» 30 տարին» թատերախումբը:

Ներկայացուած թատերախումբը ընտրութիւնը աներկբայ բաղձալու բան մը պիտի չթողնուի արդէն, նորակազմ թատերախումբը, ինչպէս առաջին օրէն իսկ յայտարարեց, իր ծրագրին մէջ աւելցնում է գլխաւոր դերեր Տոմաս Դիւրի, Վոլֆֆէն Նախապետարար, Նիկոլայով Պուկարաճայ հանրութեան մինչ այժմ ընտելացած աւելի կտմնուող կոչութեան թատերին մէջ նորութիւն մը բերելու թատերը անշուշտ ժողովուրդի մը բարոյական դաստիարակութեանը խնդրոյն մէջ աշխատակցութեան կարեւոր բաժին մը կրնայ ունենալ, պայմանաւ սակայն որ զայն վարկենական կոպիտ զուարճութեանց մէջ չսահմանափակենք: Ու անկեղծօրէն կուրախանանք այլ երբ կը տեսնանք որ թուրքերը մէջ «թատերական արուեստ» ըստ ձեռք մշակողները նախ Հայերը ըլլալէ ետք, այսօր ալ հայ արուեստագէտներու խմբակ մը—գործադրող պարագաներ այս հողին վրայ տարապրած են—նոյն բանը Պուկարաճայի թատերին վրայ մոռնալու վրայ է: Հետեւապէս, հայ հասարակութիւնը պարտաւոր է կրկին տեսնուի մը իր աջակցութեան ու քաջաբերութեանը: Այս անգամ իրենք իրենք ալ ծանօթանան թատերական արուեստի ու բարոյական հեղինակութեան կողմանէ զնախապետին են, այլ մանաւանդ հայ թատերախումբը մը գոնայիք յաջողութիւնը միանգամայն հայ ցեղին համար արժանիքի խնդիր մը պիտի ըլլայ:

Թատերախումբը իր կողմէն հանրութեանը գոհացնելու համար կարելիէն աւելին կընէ: հանգիստեցնելու, գործադրելու տուած հինգ ներկայացումները միջոցին տեսնելու պատենտութիւնը ունեցանք, ինքնին պիտի բաւեն համոզուել, չհասկնալով թէ թատերախումբին վարկը կազմակերպութեան կատարելութիւնը ապահովցնելու որքան հետաւում, որքան նախաձեռնողի է: Կիրակի գիշեր, օրինակի համար, Ս. Պոստոլայի ներկայացմանը մէջ, գերակատարներու հանգիստեցնելու շնորհապէս յաջող էր արդէն Հիւկոյի թատերախումբը գրեթէ ամբողջութիւնը անթերի յօրինուածքի, շնորհ ու տարօրինակ տպագրութիւն անակնկալներու, արուեստական յաջող հակադրութեանց—որոնք սակայն բնականութեան լիովին զուգահեռ չեն—մեքենական տողանցութիւն մը կը ներկայացնէ, որ, երեւութապէս գոնէ, հմայքէ բոլորովին զուրկ ալ չէ: այդ խաղերուն յաջողութեանը համար մանաւանդ անհրաժեշտ էական կարեւորութիւն մը ունի հանգիստեցնելու անթերի պատրաստութիւնը:

Ալէքսանդր Մակեդոնի մէջ կայ, ինչպէս տեսնուեցաւ, Մաքեդոնի ու Միքելէզի գրաւիչ հակադրութիւնը: Երկուքն ալ կը քննարկեն թշնամութեանց անձնատուր, իրարու հակընդդէմ նպատակներու յանգելու համար զիրար փոխադարձաբար պատրելու կը հետամտին: Միքելէզի օգտին կոյր գործիք մէջ տեղի ունեցող Պոստոլայի շահերուն ու պաշտպանութեան նուիրումը:

Պ. Երամյան, ապագայի տէր դերասան մը, այս գիշեր գիտցաւ յաջողապէս պատկերացնել, մանաւանդ երբ խաղին հանգիստ գիշեր Մաքեդոնի հետ նոյն սեղանին վրայ ձգեց: Մաքեդոնի գերը, գործը Պ. Երամյանի կատարեց, աւելի գիտակից, աւելի խորունկ է:

Իսկ հինգշաբթի գիշերուան խաղը, «Առաքելայի մը կեանքին» 30 տարին», գոյցէ նուազ չքեղ, բայց տարակուս չկայ թէ շատ աւելի բարոյայից էր այս ձեռք խաղերը, ուր ժամանակակից իրական մոլորութիւնները գերակատարներու վրայ որոշապէս կը մարմնանան, հանգիստեցնելու համար աւելի զգալի, աւելի հասկնալի է:

Տ. Է.

ՅԱՆՑԱՆՔԸ ՈՐՈՒՆ Է

Պ.

28 ՍԵՏՈՒԿԻ ԽԱՉԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ

(Շար. 71րդ թիւին)

Հոս աւելորդ չինք սեպտեմբեր համառօտ եւ կարճ կերպով պարզել թէ, ինչպէս այս խնդրոյն մասնակցած էր Առաքելը, որ ոչ գոմիթէի անդամ էր եւ ոչ ալ յեղափոխական:

Եղակար կարգապետ գոմիթէի անգամ ըլլալով իրեն յանձնուած գէնքերը եւ փամփուշտները անտակնորդ իր տան մէջ կը պահէր: Ձէնքերը երբ ծախել կը սկսէին գոմիթէի ներսէն անգամայն թիւնցաւ շատ անհշտ գնով մը, Առաքելը ծրագրի մը կը կազմէ եւ գործադրել կը սկսի, քանի որ կը տեսնայ թէ այդ հագուստը գիտ գէնքերը կը գնեն Պուկարաճայ, Յոյները եւ նոյնիսկ թիւրքերը: (Բայց վառնալու տուած մեր պայքանեան ընդհանուր ներկայացուցիչը, ակնհայտ խուլ կըլլան եւ աչքերը կոյր, նամակներէն եւ հեռագրերէն չուզեր բան մը լսել եւ տեսնել): Առաքելը առնելիք կուսենայ կոչակար կարապետին, քանի որ ինքը կաշխատեցաւ էր, ինչպէս կերելի կարապետ միտմիտ մէկը կըլլայ եւ կը համոզուի Առաքելի խօսքերուն:

Սա կը համոզէ կարապետը թէ, փոխանակ այդ մեծաքանակ գէնքերը ուրիշներու ձեռքով ծախուելու, ինքը եւ կարապետը միասին ծախեն: Կարապետին աւելին ամբողջանալէ վերջ մնացեալ տակները մէջերին բաժնեն: Կը համաձայնին:

Գիշերանց Առաքելը այդ սնտուկները վերսկսելու մէջ ծրարելով կարապետի տունէն իր որոշած տեղը կը փոխադրէ, որով գէնքերը Առաքելի տրամադրութեան ներքեւ կանցնին:

Առաքելը մաս մաս ծախելով չկրնար սպառել գէնքերը: Գառնապատի տունովաճառը կը տանին մնացեալ մասը եւ կարապետի հետ միասին ամբողջ ալ հոն կը ծախեն: Չէ՞ որ ծախուածներու ստակները Առաքելի քով կը հաւաքուին, երբ կարապետ կը պահանջէ իր բաժինը, Առաքելը կը մերժէ կարապետին ամբողջ բաժին տալ եւ կարապետը կը զգայ Առաքելին ծուղակն իյնալը: Կարապետ իր խորուրդ տեսնելով այլեւս չուզեր Պուկարաճայ մնալ, կորոշէ փախչել Ռուսիայ, բան մը որ արդէն նպատակաւոր էր Առաքելին համար:

Տօնավաճառէն Պուկարաճայ կը վերադառնայ: Նոյն երկուց կարապետը լալով իր ընտանիքին կըսէ.

«Պապիւս գնաց. պիտի խախտուակուիմ. Առաքելը մեզի հոգեով մարմնով վառեց եւ մոխիրի վրայ նստեցուց»:

Կարապետը այս խօսքերը իր ընտանիքին ըսելէն վերջ գիշերանց տունէն դուրս կելնէ եւ խեղճ ընտանիքը գրեթէ բան մը չը հասկնար ամուսնոյն խօսքերէն: Խեղճ կինը ի գուր օրերով կը սպասէ իր ամուսնոյն վերադառնալուն: Առաքելէն կ'իմանայ որ Կարապետը այդչէն Ռուսիայ հասած է: Ուր օրէն վերջ Առաքելը կարապետին ընտանիքին եւ զաւակներուն ծախքերը հոգալով զանոնք ինք անձամբ չոգնուաւ: Կը տանի եւ Ռուսիայ կը զրկէ կարապետին քով:

Այս կերպով ոչնչացած եւ հիւլէ մը չէ մնացած 28 սնտուկ գէնքերէն, որոնք ժողովրդի դրամով գնուած եւ ահագին գումարով թեմա Պուկարաճայ հասած էին եւ Դաշնակցութեան նման գործող կուսակցութեան մը յանձնուած էին: այդ կուսակցութեան բարձր մարմինն ալ յանձնած էր իր ընդհանուր ներկայացուցիչին, սա ալ պահած էր իր կողմէն վստահելի («») գոմիթէին քով:

Այդ գէնքերն անցան նոյնիսկ ոչ յեղափոխականի մը ձեռքը եւ ծախուեցան Պուկարաճայ, Յոյներու եւ թիւրքերու (մեր թշնամիներ): Մեր յեղափոխական զինուորներն առանց գէնքի մնացին, եւ 12,000 ֆրանքի գումար մը ոչնչացաւ: Խաչագողները գտնուեցան, 2,000 ֆրանքը գրաւուեցաւ եւ վերջէն կրկին խաչագողին վերադարձուեցաւ այդ գումարը:

Այժմ 28 սնտուկի պարունակութեան հիւլէ մը իսկ չկայ եւ թէ խաչագողները ուզած են եւ թէ այդ խնդիրը մոռցուելու աստիճանին հասած է:

Յանցանքը որոշն է:

Յ. Կ. ՃԱՆԿԻՆԵԱՆ

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՎԿԵ. Հոյրապետը երկու շաբաթի չափ Տփղիս մնալ իետոյ անցնալ շտաբու, Ս. Էլմիսին գործած էր. կողիստի թիւթերը կը գրեն թէ Նոյնիսկի կէսին Ն. Ս. Օժոթիւնը կրկին Տփղիս պիտի գայ: Յետոյ է որ Ռուսիայ թիւթերը չեն յայտնուի տալ երթելու թեան առթիւ տուող պատգամները:

— Կալազ թիւթի գրածին նայելով, Տփղիսի մէջ երկու տեղէ կեղծ գրած կտորներ ձերբակալուած են, որոնց քով թէ գործիքներ եւ թէ կեղծ գրածներ գտնուած են: Եւ յայտնուեցին թիւթեր, Ս. Օժոթիւնի թիւթեր, Ս. Օժոթիւնի թիւթեր, Ս. Օժոթիւնի թիւթեր, Ս. Օժոթիւնի թիւթեր:

— Յոյսին է թէ Էլմիսին Սանտարեան վարժարանին խնամակալութիւնը, որուն նախագահն է Պոլսոյ Պատրիարքը, որոշում տուած էր վարժարանը Էլմիսին խորհրդով փոխադրել: Այս փոխադրութեան առթիւ պոլսահայ եւ ռուսահայ մամուլին մէջ յարուցուած անվերջ վիճաբանութեանց հետեւանքով, խնամակալութիւնը հարկ դատեց խորհրդով հայ ճարտարապետ մը, Մելիտոսեան էֆ. զրկել՝ որպէս զի տեղոյն վրայ մանրամասն քննութիւն մը կա:

տարէ: Ճարտարապետին տեղեկագիրը վարժարանին խորհրդով փոխադրութեանը նպատակաւոր ըլլալով, փոխադրութեան մասին այն տարակոյս չմնաց: Միայն այժմ խնդիր կելլայ թէ վարժարանը խորհրդի Սանտարի վանքը տեղափոխուելու է, թէ խորհրդի տեղափոխութեան տրամադրութեանը լանձնուած հողին վրայ:

Դպրոցական չէնքը պիտի կազմեն երկար չէնք մը, գաստառու: Ներուն համար առանձին մասով մը ինչպէս նաեւ տրհնատարների, հիւանդանոցի, լուսարարանի, խոհանոցի, միջերանոցի եւ անոսի համար յատուկ մասերով: Այս շինութեանը բոլոր ծախքը 6,700 ոսկիի մօտ կը հասնուի: Խոհանարանութիւնը որոշեալ է իր առաջիկայ նստին մէջ այս տեղափոխութեան առթիւ վերջնական կարգադրութիւն մը ընել:

— Մարտիոյ մէջ վախճաններ է կենարացի ծառի վաճառական, Յովհաննէս Կիւմիւշեան որ իր եղբորը հետ ծննդավայրը դպրոցով մը օժտած է, 350 ոսկիի չափ գումար մը այս ձեռնարկին յատկացնելով, կը կարծուի թէ իր կտակին մէջ, որ քաղաքական ժողովոյ առաջիկայ նստին մէջ բացուելու է, այս բարերարական հիմնարկութեան տեւականութիւնը ապահովող գումար մը նշանակած է:

— Իզմիրի ծանօթ հայազգի վաճառական Մատթէոս Պալիօզ-սան սպանուել է Պարսկաստանի հայու մը կողմէ որ Պետրոս Ալիշօֆ անունը կը կրէ: այս անձը, ինչպէս Բիզանդիոնի կը գրեն, նախ փողոցին մէջ Պալիօզ-եանի կընկերանայ, ու լանկարծ ուղղութեամբ հանելով, զայն կսպաննէ վայրկեանապէս: Պետրոս Ալիշօֆ որ 28 տարեկան Պալիօզէն եկած անձ մըն է եղեր, զինքը ձերբակալել ուզող մէկ քանի մարդերու վրայ կրակ կընէ, բայց զերջապէս օձիքը ձեռք կուտայ:

Բիզանդիոնի Պալիօզեանի սպանութեան այս դէպքը պատմելէ վերջ կը յաւելու. «Իզմիրի Հայնաղաքատաւէր պաշտպան մը, բարեբար մը կորոյս: Շատ օտարազգիներ, տեղացիներ այսօր դառնապէս կողքան այս յեղակարծ մահը»:

Պալիօզեանի սպանիչը հարցաքննութեան առնելու յայտարարել է թէ ինք պաշտօնեայ մըն է Ռուսիա գտնուող Մանուկ Իմանուէլեան անունով հայու մը, որուն հրովմանին համաձայն գործած է այդ սպանութիւնը:

— Նոր-Ջուղայի մէջ Հայրապետական կոնգրակով հաստատուած է Գէորգ Քանանեանի անուն հիմնուող կեդրոնական դպրոցի ծրագիրը: Քանանեանը յիշեալ նպատակին համար 40,000 ռուբլի կտակած էր:

— Բարիզի արուարձաններէն Շուազի-լը-Ռուայի մէջ կոմսուհի

